ԿԻՆ ԺՐԱԳԼՈՒԽ

ԸՍՏ ԱՌԱԿԱՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ,

—

Կին ժրագլուխ պատուականագոյն
Բան զականս պատուական.
Կին ժրագլուխ պըսակ առն
Եւ թագուհի իւրոյ տան։

Կին իմաստուն շինեաց իւր տուն,
Կանգնեաց անդէն եօթն սիւն.
Եդ ի վերայ հաստատութիւն
Յեօթն ազգի իւր սերունդ։

Զեն զգենլիս, արար սեղանս,
Խառնեաց գինի ի տաճար,
Ուտել կոչեաց զանզգամս —
Խնդրել զիմաստ և հանճար։

Կին տանտիկին՝ զերթ վայելուչ
Ույգի յանկեան տան իւրոյ,
Որդիք՝ զերթը զսեղանովք շուրջ
Մատաղատունք ձիթենւոյ։

Ծածկէ զտուն իւր հովանի,
Բարունակք՝ զյարկս վերնատան,
Զդէ զորթ իւր մինչ ի դրացիս,
Շառաւիղքն՝ ի հեռաստան։

Պտուղ նորա՝ պտուղ սիրոյ,
Կթեն իւրքն և օտարք,
Եւ յարենէ իւր ողկուզոյ
Քամեն իշխանք և տնանկք։

Վստահ ի նա սիրտ առն իւրոյ,
Ոչ կարօտի աւարաց,
Գործակից է առն իւրոյ
Ամեն բարեաց և կենաց։

Յառնէ ընդ այգն ընդ արշալուսն
Տայ կերակուր ընտանեաց,
Եւ գործ ձեռաց յայգուէ ցներեկս
Նաժշտաց և աղախնեաց։

Գտեալ նա զաստ և զկտաւս՝
Առնէ անօթս պիտանի,
Զերթ շահաբեր նաւ՝ իւր գանձս
Հեռաստանէ ժողովէ։

Տեսանէ նա զանդ վեղեցիկ —
Գնէ զնա յըստացուած,
Եւ ի պտղոյ ձեռաց իւր գիրգ
Գործէ զերկիր յերկ արդեանց։

Գօտի ածեալ հաստատութեամբ,
Ընդ մէջ իւր վաղորդայն,
Մխէ զբազուկս ի գործ քրտամբ,
Եւ ոչ դառնայ ձեռն ունայն։

Ճաշակէ նա և տեսանէ՝
Քաղցր է գործել՝ ում է կամ,
Ոչ շիջանի ճրագ ի նմանէ
Զգիշերն ամենայն։

Զգէ զձեռս իւր ի յօգուտ,
Յօգուտ տան իւր ու օտարաց
Եւ զմատունս իւր անձանձրոյթ
Ի լոյս տան իւր և բազմաց։

Բանայ զձեռս իւր ողորմած
Ընդարձակէ աղքատաց
Եւ կարկառէ զօրհանապազ
Պտուղ քաղցր տնանկաց։

Ոչինչ հոգայ ի կողմանէ
Տան իւրոյ տէր—այր նորա,
Յորժամ հնոի նա ի տանէ
Յամել ուրեք անկ նմա։

Քանզի տրար նա առն իւրում
Բնհեղս և ծիրանիս,
Արար նա և անձին իւրում
Արկանելիս և օթիս։

Զամենեսեան, որ զնովաւ,
Ագոյց կրկին պատմուճանս,
Արար արկանելիս, կտաւ,
Եւ վաճառեաց ի Քանանս։

Զբերան իւր իմաստութիւն
Բանայ շափով խնայութեան,
Եւ կարգ դնէ լեզուի իւրում
Մի՛ երանել ըստ սահման։

Զգենու մեծ — վայելչութիւն
Եւ զօրութիւն ի բարիս,
Ուրախ լինի յաւուրս յետին
Ցիւր վաստակոց ի քրտինս։

Պարկեշտ են մուտ, ուղիղ և ել
Ճանապարհաց տան Նորա,
Հաց դատարկութեան նա ոչ եկեր,
Շահեցաւ կեանս ձեռք Նորա։

Ողորմածութիւնքն յաղքատս
Կանգնեն զորդիս իւր կարօտ,
Եւ մեծ առնեն զնա և զնորայն
Առաջի Տեառն և մարդկան։

Երևելի է այր Նորա
Ի դրունս, յորժամ նստիցի
Ի ժողովրդեան ի մէջ ծերոց,
Եւ ընակչաց իւր երկրի։

Գովէ ասէ այրն ցկինն —
Բազում դստերք ստացան
Զմեծութիւն, և բազումք են
Որք արարին զօրութիւն։

Բայց դու եղեր մեծ ի դստերս,
Մեծ ի կանայս առաւել,
Եւ անցուցեր դու զանցուցեր
Զամենեքումբք գերիվեր։

Սուտ հաճութիւնք ընդունայն գեղ
Կնոջ՝ ի քեզ ոչ գոյ արդ,
Զի օրհնեսցի կին հանճարեղ
Իմաստուն և բարեպաշտ։

Զերկիւղածս պատուեսցէ Տեառն
Տո՛ւք որ առնուքդ, տո՛ւք նմա,
Տուք ի պտղոյ շրթանց Նորա,
Գովի ի դրունս այր Նորա։

Զի ճանապարհք առնն երթիցեն
Իւր երեսաց առաջի,
Եւ ի բարիս աջողեսցին
Գնացք ոտիցն յաշխարհի։

Սամուէլ Գիւլզադեանց

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ.

Ատրախանի Կոնսիստորիայն 1050 ի 28 Յունիսի տարւոյս գրած է խմբագրութեանս հրատարակել, որ այլ և ս Ատրախանի եկեղեցիք չունին աւելորդ զարդեր և սպասներ միւս վիճակաց կամ Պարսկաստանի եկեղեցիաց ուղարկելու, թող այսուհետև չդիմեն Ատրախանի եկեղեցիաց կամ Կոնսիստորիային. նոցա խնդրագրերն կը մնան անպատասխանի և առանց հետևանաց։

Աւագիկայ Օգոստոս 1/20 Յուլիսի, ԱՐՄԷՆԻԱ անուն հայերէն մի լրագիր պիտի հրատարակուի Մարսէյլի մէջ, շաբաթն երկու անգամ, համարատուութեամբ Ֆիլիքս Անֆանդէնի և խմբագրութեամբ Մ. Փորթուգալեանի, տարեկան բաժանորդագինն է 10 ր. թղթատրամ։ Խմբագրութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։

ԱՐՄԷՆԻԱՒ շրջաբերական յայտարարութիւնը Յրիտոպէ կը դրկուի եթէ ցանկացող լինի իմանալու այդ լրագրի նպատակը, ուղղութիւնը և պայմանները։ Կարելի է դիմել խմբագրութեանը, ֆրանսերէն հետևեալ հասցէով. M. Portoukalian, Rédacteur du journal ARMENIE, rue Arménie, 2 (Hôtel Forer), MARSEILLE (France),

---

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.